




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Է. — ՇՐՋԱՆ ԺԲ.

ՏԱՐԻ ԺԲ. — ՅՈՒԼԻՍ 1.

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ.

Գոպէնեւ կան, որ մեր սիրտը բոլորովին կոտորում են, մեր ամեն յոյսերը ոչնչացնում, դատարկ հանում: Այնպիսի ժամանակներ կան, որ ծանր ու դժուար տանելու պատահմունքներ մեզ հակառակ միանում են և մեր ամենասուրբ համոզմունքները մեր մէջ թուլացնում և մինչև մեր ունեցած հաստատուն հաւատն անգամ Աստուծոյ նախախնամութեան վերայ մեր մէջ թուլացնում և կարծես խեղդում:

Մենք զարհուրումենք, երբ որ տեսնում ենք, շատ անգամ, որ չար գործը յաղթումէ, իսկ արդար ու բարի բանը յաղթւում. երբ որ տեսնում ենք, որ քրիստոնեայ արդար մարդին և իւր պարտականութիւնները ճշմարտութեամբ և արդարութեամբ կատարողին շատ անգամ ճանաչողը, զին զնողը չկայ, այլ նորա վերայ ծիծաղում են, նորան հալածում են, բայց մի անձնասէր, խորամանկ, կամ ոյժ ունեցող չարագործին լաւ աչքով են նայում և այնպիսի մարդը ամեն իւր բռնած գործերի մէջ բաղդաւոր ու յաջողակ է. այս և այսպիսի բաներ երբոր տեսնում ենք, կասկածանքի ենք գնում ականայ ու հարցնում ենք ինքներս մեզ թէ այս ի՞նչպէս բան է, մի՞թէ աստղերից բարձրումը աչքը միշտ աշխարհիս վերայ պահող նախախնամութիւնը չէ հսկում: Բարեպաշտ ընտանիքներ կային, որ բաղդաւոր էին ապրում. ախ ինչպէս եղաւ, որ ծանր անբաղդութեան զոհ գնացին: Ի՞նչ մեղք էին արել, որ նոցա տունը, ընտանեկան առաքինութիւնների այն յարկն ու ընակարանը կրակ ընկաւ, այրուեցաւ: Այն հայրը, որի մէջքը այս փորձանքից կոտորվեցաւ, ի՞նչ էր արել, որ նորա բոլոր կարողութիւնը մի քանի ժամի մէջ ձեռքից բոլորովին գնաց, կորաւ ու մնաց դատարկ

ձեռքով, այն կարողութիւնից զրկուելով, որ ձեռք էր բերել բոլոր իւր կեանքը դնելով և ամենեին աչք բաց չանելով աշխատանք անելուց, որքան չարչարանք քաշելուց, Այն գիշերները, որ հազար ու մէկ հոգսեր անելով էր անց կացնում, այն օրերը, որ հազար տեսակ չարչարանք էր քաշում, իւր ընտանիքի լաւ օր տեսնելու համար թափած այնքան քրտինքը, իւր տրտմիլը և յոյս ունենալը, որ երկար կապրի — այս ամէն բանն ևս զո՞ւր էր, Ի՞նչ մեղք էր արել խեղճ կաթնակեր տղան, որ իւր ծնողների միակ ուրախութիւնն էր, որ նա ևս այդ կրակի փորձանքին բաժին ու մատաղ գնաց, ինչո՞ւ համար են մի շատ անմեղ մարդու ընտանեկան բաղդաւորութեան ամենայն յենարաններն միասին միանգամից կոտրատւում, ամենայն յուսատեղին կտրվում, այնպէս որ ապագային նա պէտք է մեծ նեղութիւններ քաշելուց աչք բանալ չկարողանայ, աղքատութիւնից աղատուելու ճարն ու ճանապարհ չգտնելով, Սարսափ է գալիս վերաներս և հարցնում ենք ինքներս մեզ թէ կոյր ու անգութ դիպուածն է արդեօք իւր խաղը խաղում աղամորդուս հետ, թէ մեր վերայ հսկում է՞ մի նախախնամութիւն, Հիւանդ տղայի մահուան անկողնի մօտ ծուկ է չոքում անմխիթար մայրը, Սիրեկան զաւակը, որին ցաւով է ծնել ու քնքոյշ խնամով մեծացրել, մի թառամող ծաղկի նման պառկած է իւր առաջին և աշխարհիս մէջ ունեցած իւր մայրական շատ մեծ ուրախութիւնները իւր սրտի մէջ թառամում են այդ մանուկի հետ միասին, Լացից ուռած աչքերը բարձրացնում է դէպ ի երկինք և կրկին փափագով ձգում իւր տանջուող հրեշտակի վերայ, Համբուրում է նորա դեղնած երեսը, վերջին անգամ բաց է անում նա իւր աչքերը և մի անգամ ևս քաղցր ու անմեղ ժպիտ երևացնում իւր երեսի վերայ, մօրը վերայ նայելով, միանգամ ևս իւր փոքրիկ ձեռքերը ձգում դէպ ի նորան, կարծես թէ վերջին մնաս բարեւասելով և, սէրը սիրուց, սիրտը սրտից կտրվում, բաժանվում է, Սիրտը անց կացած, ուշքը գնացած ընկնում է անբաղդ մայրը իւր սիրեկան տղայի անշնչացած դիակի վերայ, Ուրեմն զո՞ւր էր նորա սրտանց աղօթքը, որ մենակ տեղ քաշուած, կանգնած կանէր, արտասուք թափելով, աղաչանք, պաղատանք անելով և երկնքից իւր զաւակին առողջութիւն խնդրելով, պղտորուած սրտով աչքերը ձգում է նա դէպ ի երկինքը, սառած մնացած նայում, կարծես թէ հարցնում է, կայ՞ նախախնամութիւն, եթէ կայ, ինչո՞ւ է ինձ աչքից ձգում:

Այո, այնպիսի բոպէսներ կան, որ մեր սիրտը սաստիկ կոտրում են, Այնպիսի ժամանակներ կան, որ կարծես ամէն բան մեզ թշնամի է դարձել, կարծես միասին խօսք կապելով մեզ միայն վատութիւններ անելու, մեր գլխին տեսակ տեսակ փորձանք ու անբաղդութիւն բերելու, ու հնար չկայ մեզ այդպիսի մեր վատ օրերում մի բանի վերայ հաստատ յոյս ունենալու, Այսպիսի սև օրերում մեզ այնպէս է երևում, որ մենք աշխարհիս երեսին միայնակ ու անտէր ենք մնացած, կարծես թէ մեզ համար, կամ մեր գլխի վերայ Աստուած չկայ, կարծես թէ մեր լաւն ու վատը, բաղդաւորութիւնն

ու անբաղդութիւնը մեզ հետ միասին մի կոյր պատահմունքի կամքին է թողած բոլորովին, և այս կոյր պատահմունքը, որոնց բարձրացնում է, որոնց վայր ձգում առանց մի մտքի կամ նպատակի: Այդպիսի ժամանակ մեր քրիստոնէական հաւատը երևում է մեզ միայն մի խաբէութիւն, մի սարսափելի ու անգութ առասպել, տկարամիտ մարդուս երեւակայութեան մի պտուղ միայն, որի մէջը ոչ ճշմարտութեան հետք կայ և ոչ գութ պտուելու տեղը:

Ի՞նչ է նախախնամութիւն. ի՞նչ պէտք է հասկանանք այդ խոշոր բռնի տակը: Հիմնաւոր պատճառ ունի՞նք արդեօք մի ճշմարիտ բան հասկանալու այդ բռնի տակը, թէ ամենայն բան, ինչ որ աշխարհս շարժեցնում է, խելք չհասցնելու ընական զօրութիւնների խաղն է միայն և մի անկենդան ճակատագրի մղում:

Արդէն մի անգամ որ աչք ենք ձգում այս հրաշալի աշխարհիս և նորա մէջի ամենայն արարածների վերայ, իսկոյն համոզվում ենք, որ այս ամեն բանը զիպուածի գործ է կարող լինել: Ամեն մի մարդու տուն, նպատակայարմար ու կարգով կանոնով շինուելու համար, պէտք է մի ճարտարապետի ձեռքից դուրս գայ, ինքն իրան է կարող շինուել: Ո՛րչափ ևս առաւել այս աշխարհիս, որ մի անչափ մեծ տուն է, մեծութիւնը և ներդաշնակութիւնը տեսնելով, պէտք է այն մտքին գանք, թէ այստեղ ևս մի իմաստութիւն, մեզ անյայտ ժամանակներից սկսած, ամենայն բան տնօրինել է, իւր ստեղծագործող լինելու խօսքը ասելով: Եւ այս ստեղծող գործողութիւնը մի միայն ստեղծման բոլորի համար պէտք է եղած չլինէր ու չվերջանար, այլ տնօրինում, կառավարում, առաջնորդում է անդադար: Մի անհրաժեշտ վկայութիւն այս մասին է աշխարհիս և նորա մէջ եղած ամեն բանի մշտական, չվերջացող, միշտ նման և միակերպ և ամեն ժամանակ փոփոխութիւնների տակ ընկնելով միշտ կրկին նորոգուող կեանքը: Գարունը և ձմեռը, մրրիկն ու արև դուրս գալը, ովկիանոսների հոսումներն ու բուսեղէնների դուրս գալը, կանաչելն ու ծաղկիլը, կենդանիների կեանքը, շարժում, ձգտում, և վերջապէս զգացող և մտածող մարդը իւր այլ և այլ վիճակներով — , այս ամեն բանը իմացնում, յայտնում է մեզ, որ կառավարում է մի ամենակարող Ձեռն: Ի՞նչպէս համաձայնութիւն կայ ամէն բանի մէջ: Որպիսի սուրբ կապակցութիւն է տեսնվում ու տիրում թէ՛ այն բաների մէջ, որ բնութեան կամ աշխարհիս մէջ լինում են ու պատահում, և թէ՛ մեր խղճմունքի մէջ: Որպիսի մեծ կապ կայ շատ հեռաւոր ու մօտ ժամանակների մէջ, ի՞նչպէս զօրաւոր և ազդող կերպով են ներգործում ու պատճառ կամ հետեանք լինում յետագայ ժամանակի մէջ յառաջ եկող բաներին, կամ եղած անցքերին: Որպիսի զարմացմամբ և երկրպագութեամբ զգում ենք մենք և հասկանում մեր ամէն մտածմունքից ու մտքերից բարձր այն իմաստութեան մտքերը, նորա դասաւորութիւններն ու կարգաւորութիւններն, որ թէ՛ ամենամեծ և թէ՛ մեզ ամենափոքր երեւցածի մէջն ևս միակերպ փառաւորապէս յայտնվում է: Այս ոչ մի ժամանակ գործելուց չզա-

դարող ձեռքը՝ այս ոչ մի ժամանակ չվերջացող ամբողջ աշխարհիս առաջ-
նորդութիւնն ու կառավարութիւնը մենք ասում ենք Աստուծոյ Նախախա-
նութիւն։ Մեր այս ասածը կարճ է գալիս, մեր տուած այս անունը իբրեւ ի-
մաստ ունեցող խօսք թոյլ է, ինչպէս որ թոյլ և անկատար է մեր ճանաչ-
մունքն ևս Աստուծոյ գործերի և այն նպատակների մասին, դէպ ի որ նպա-
տակներ որ տանում է մեր Ստեղծողի խնամքը երկրիս վերայ բնակող բոլոր
մարդկային ազգը, մենք ըմբռնում ենք յաւիտենական ճշմարտութեան լուսոյ
միայն մի փոքր ու թոյլ նշոյլ։

Այս սուրբ գաղափարները, որ ունինք Աստուծոյ նախախնամութեան
մասին, անցած կամ այժմու ժամանակի փիլիսոփայական դպրոցների
հնարած բաներ չեն։ Այս այն մտածմունքներն ու զգացումներն են, որ
մարդկային ազգը իւր գոյութիւնից սկսած ունեցել է և ունի։ Հին աղբերն
արդէն ունէին նոյնը, թէև մութ ու պղտոր կերպով։ Այս ճանաչմունքն
ու զգացմունքը իւր կատարելութեանը աստիճանին հասցնելու ճանա-
պարհն մեր առաջին բացեց մարդկային ազգի գերմարդկային Ասուցիչը Յի-
սուս Քրիստոս։ Այս բանը ոչ թէ ուսումնական ճանապարհով արեց, այլ
այնպիսի հասկանալի կերպով, ինչպէս որ իւրաքանչիւր ժողովուրդ կարող
էր մտածելով հասկանալ, որով և իւր յայտնած բաները ամենայն դարի
և ազգերի սեպհականութիւն դարձան թէ գիտնական և թէ տգէտ մարդոց
առ հասարակ։ Փրկիչն ասումէր. « 2^է՝ որ էրիս ճշգրտի մի դաշտի է քաղցած
բաց նորանցից և ոչ մէկ առանց յէր Հօր Իմից բերելու չէ ընկնում »։ Ինչէր գլխի մէջ
մարդին առաջ համարուած էն, որոն համար մի լաւ էր, պարտաւոր որ դաշտ
ճշգրտիցից լաւ էր »։ Այս պարզ խօսքերը բանալիք են մարդոց գլխին ե-
կած բաներին, որ մեզ համար հանելուկների նման բան է դառնում և ան-
հասկանալի մնում։ Այս մի Աստուած, որ ամենափոքրիկ արարածի կեանքի
ընթացքն անգամ որոշում է, որչափ ևս առաւել պէտք է հոգայ Իւր հաւա-
տարիմ ու անփոփոխ սիրովն Իւր այն զաւակների համար, որոնց անմահ,
երջանիկ և երկնաւոր կեանքի համար է ստեղծել։ Անակնկալ բան, կոյր դի-
պուած ամենեւին չկայ աշխարհիս երեսին և չէ կարող լինել ամենայն բան
և ամէն մի բան Աստուծուց է կարգադրուած ու սահմանուած։ Հակա-
ռակ կլինէր Աստուծոյ ամենագիտութեանն և ամենակարողութեանն մեր
կողմից կարծելն կամ ընդունելը, որ դիպուած կամ պատահմունք ասած
բանդ կայ աշխարհումս. ուրեմն այդպիսի բան մեր մտքից անց կացնելն ան-
գամ անկարելի է։ Ինչ որ մեր գլխին գալիս է, Աստուծուց է, Աստու-
ծոյ կամքովն է մեզ պատահում, որովհետև մեզ սիրող ու խնամք տանող
երկնաւոր Հօրիցն է մեր գլխին գալիս, ուրեմն բարի է և բարի պէտք է ճա-
նաչենք մեզ համար ու սիրով ընդունենք, մեր խելքը հասնի, կամ չհաս-
նի։ Սորա համար մի վախենար։

Բայց սովորաբար, շատ ու շատ մարդիկ մտածում են Աստուծոյ օգնու-
թեան հասնող նախախնամութեան վերայ այն ժամանակ, երբ որ անբաղ-
դութեան մէջ ընկած են արդէն վաղուց և բաւական քաշած։ Բանի որ

յաջող հանգամանքների մէջ, բաղդաւոր, գոհ էին ապրում, հազարից մէկ անգամ էր պատահում, կամ այն ևս չէ, որ մտածեն Աստուծոյ կարգադրութիւնների վերայ, իրանց նման Աստուծոյ ստեղծած մարդոց գլխին եկած բաների մէջ տեսնելով Նորա տնօրէնութիւնը, Այն ժամանակ միայն, երբ որ նեղութիւնը ամէն կողմից զալիս է, պատում անբաղդութեան մէջ ընկած մարդուն, ախ ու վայ կանչելով աչքերը դէպ ի երկինքն է ձգում և իւր քաշածների մէջ հարցնում թէ, կայ արդեօք և հսկում է իմ վերայ ևս մի Նախախնամութիւն, Բայց այս իսկ վախը սիրտը ընկած դրութեան մէջ ամենասակաւ յարմարութիւնը ունի նա, կամ ընդունակութիւն համոզուելու աստուածային Նախախնամութեան իմաստուն առաջնորդութեանն, կառավարութեանն, կամ տնօրէնութիւնների մէջ, Նորա սիրտը այնչափ ընկճուած (կոտորուած) է իւր վերայ եկած ցաւից, ու այնպէս անհանգիստ է ու պղտորուած, որ ամենեւին կարող չէ նա ազատ ու անդորր կերպով մտածողութիւններ անել: Նա այն միջոցին քաշած իւր ցաւի մէջ չէ կարող տեսնել կեանքի կապակցութիւնն ու յատկազօրը: Իւր գլխին եկած մի վատ պատահմունքի պատճառով, որի համար տրտմութեան մէջ է նա սեւացած սրտովն պղտորուած մտքով է մտածում ու բոլորովին չէ հասկանում, չէ ճանաչում իւր արած մեծ սխալը, որ իւր կեանքի միւս ամէն պատահմունքների զարմանալի կերպով կապուած ամբողջ շղթայիցն է կտրել ու զուրս հանել իրան նեղութեան մէջ ձգող այդ դիպուածը: Մարդիս այսպիսի հանգամանքի մէջ արած մտածմունքը Աստուծոյ աշխարհս կառավարելուն վերայ, զարմանք չէ, որ օտարոտի լինի, և այդպիսի մի առանձին դիպուածը, որ իրան պատահել է, նորան այն աստիճան մոլորեցնէ, որ նա մտածէ, թէ մեր գլխին եկած ամէն բանը ոչ թէ Աստուծոյ տնօրէնութեամբ է, այլ ընութեան զօրութիւնների անկարգ ազդեցութիւնն է, որ պիտի լինէր անպատճառ, կամ թէ ամէն բան մի կոյր, անկեանք դիպուածի կամ ճակատագրի խաղ է:

Եթէ որ մենք մեր այն օրերում, երբ որ մեր միտքն ու հոգին կարող էր բարձր ու վսեմ մտածողութիւններ անելու յարմարաւոր և ընդունելի կերպով, այն մեր օրերում, ասումեմ, մեզ նման մարդոց գլխին եկած բաները տեսնելով, եթէ լաւ մտածած լինէինք աշխարհիս յաւիտենական կառավարչի մեզ համար մութ ու անհասկանալի կարգադրութիւնների վերայ, մեր միտքը, մեր հոգին կրթուած կլինէր և մի դժ ստացած, այնպիսի դժ, որ թուլացնել, կտրել չէր կարողանալ ամենամեծ անբաղդութիւնն անգամ: Մենք ճանաչած ու հասկացած կլինէինք, թէ կան այնպիսի մեզ պատահած բաներ, որ մեզ համար անտանելի անբաղդութիւններ էն երեւում, բայց մեր ամբողջ կեանքի համար, կամ մերայնների փրկութեան համար օրհնալի պտուղներ են բերում: Մենք հասկացած կլինէինք որ, եթէ այս կամ այն մեր ցանկութիւնները կատարուած լինէին, մենք մեր ճշմարիտ բաղդաւորութիւնից ձեռք պէտք է քաշէինք ու զրկուած մնայինք: Մենք պէտք է խոստովանէինք, որ այս ու այն սարսափելի պատահմունքը, որ

մեր վերայ սաստիկ ազդեցութիւն արաւ, ամենալաւ կերպով ներգործեց մեր սրտի ու մտքի վերայ և թէ մենք այժմ շատ ու շատ գոհ պէտք է լինինք, լաւ հասկանալով, որ այժմեան մեր կեանքի շատ երջանիկ ժամերը, աւելի լաւ ու խելացի մեր մտածմունքը, որ ունինք, այն մեր գլխին եկած անբաղդութիւնների պտուղներն են:

Մի ուրիշ պատճառը, որ մարդս կասկած է տանում՝ Աստուծոյ յաւիտենական Նախախնամութեան վերայ, նորանիցն է, որ մենք մեզ մեծ բան ենք կարծում մեր ունեցած բաներէն: Բայց հարցաւորել, թէ ինչ ունինք, մեզ չի աշխարհիւս ու նորա բաներէն ինչ էն, հասցնում: Բայց իսկը որ նայես, մի հատ պատահած բանի անգամ, որ ջոկ կամենումենք քննել ու հասկանալ, խելք հասցնել հազիւ ենք կարողանում: Արձամիտ մահկանացու մարդ, դու կամենումես քո Աստուծուդ վերայ դատողութիւն, դատաստան անել, թէ այս ինչ բանը աւելի լաւ կարող էր անել, և դու ինքդ քեզ համար չես կարող ասել, թէ ինչ կարող է քեզ պատահել միայն մի ժամ յետոյ: Դու կամենումես կասկածանքի տակ ձգել ամենայն բան կարգադրող Նախախնամութեան գոյութիւնը, որովհետեւ քո խելքդ չէ հասնում թէ այս ու այն անբաղդութիւնը, որից քաղաքներ ու երկիրներ են քանդվում փշանում, ինչ օրհնութիւն կարող է բերել, կամ ինչ բարիք յառաջ գալու պատճառ է: Հողեղէն մարդ, դու ամբողջ աշխարհիս բանի մի փոշու կտորին ես միայն խելք հասցնում, յաւիտենականութեան մի վայրկեանն ես միայն հասկանում, և ինչ որ դու անբաղդութիւն ես ճանաչում ու անուանում, միայն քեզ է այնպէս երևում, բայց Աստուծոյ առաջին մի սուրբ ու բարի գործ է: Աստուծոյ կարգադրութիւնները աշխարհիս մեջ քննել կամեցողը ինքն Աստուծոյ ոմն պէտք է լինէր:

Ամենայն բան, որ մեր երեւակայութեամբ սաստիկ մեծացնումենք, մեզ սարսափելի ու զարհուրելի է երևում, բայց նոցա, որոնց գլխին գալիս են այդ բաները, այնպէս չէ երևում: Երբ որ երկրաշարժութիւնը կուլ է տալիս ծաղկեալ քաղաքներ իրանց մեջ բնակած հազարաւոր բաղաւոր ապրող այլ և այլ ժողովուրդներով, այս զարհուրելի պատահմունքի մեջ ամենամեծ անբաղդութիւնն ի՞նչ է արդեօք: Անշուշտ դու կասես թէ, այս ամէն մի մարդու մահն, նոցա յանկարծ սրբուիլն ու անյայտանալը այս աշխարհիս երեսից ու կենդանի մարդոց մէջից, — Ինչպէս, մահը, Մի՞թէ մահը մի սարսափելի անբաղդութիւն է: Մի՞թէ աշխարհիս երեսը ապրող մարդոց ահագին մեծ բազմութիւնից մի օրում հարիւրներ ու հազարներ չեն մեռնում, ու հարիւրներ ու հազարներ չեն ծնվում: Մի՞թէ մի հատ մարդու հիւանդութեան անտանելի չարչարանքների մեջ մեռնելը իրան շուրջը գտնուողների համար աւելի սիրտ կտոր կտոր անող մահ չէ, քան թէ յանկարծ փուլ եկած մի տան տակը մնացողների մեռնելը: Ամէքնս ևս վերջապէս այս մութ ու նեղ ճանապարհովն քնալու չենք, ի՞նչ է: Եւ մեր մարմնի քաշած անցաւոր ցաւը շատ մեծ բան է, երբ որ հաս-

տատ գիտենք, որ մենք շատ ճնշողութիւններէ լաւ ենք Աստուծոյ առաջին, երբ որ մենք գիտենք, որ մենք զաւակներն ենք այն մեծ Հօր, որ Սէր է, երբ որ գիտենք, որ մենք, թէ՛ ապրինք և թէ՛ մեռնենք, Նորանն ենք:

Իսկ, հասարակօրէն, մենք մեծ պարծառք, որ Աստուծոյ Նախախնամութեան վերայ ունեցած մեր հասարակ, վարահո-նէնն ու յոյսը մեր մէջը խաւանութեամբ, այն է, որ մենք երկրաւոր բանին, որ մեր մարմնին միայն հարկաւոր բաներն են, և աւելի տաք սրտով ու վառ մտքով չենք երկնաւոր աշխարհի համար, որին պատկանում է մեր հոգին և ուր են բոլոր ննջեցեալների հոգիները հրեշտակների հետ միասին: Ով որ հոգեւոր աշխարհին նոյնպէս սրտով կպած է, ինչպէս որ իւր տեղը իւր երկրաւոր գործերին, այնպիսի մարդու համար մահը մի զարհուրելի չարիք չէ: Նա գիտէ, որ յԱստուած է ապրում. գիտէ, որ Նորանից, Նորանում և Նորանով են եղած ամենայն բան. և թէ Աստուծոյ մէջ մահ չկայ:

Այս ևս ասենք. մեր ինչքը, մեր բարօրութիւնը կորցնելը մի՞թէ մի բրիտանի համար աշխարհիս ամենամեծ չարիքն է: Ո՞ր իսկապէս իմաստուն մարդը գլխաւորապէս այն բանի համար կապրի, ինչ որ իրան մի կտոր ժամանակի համար միայն է տրուած: Ինչ որ ինքն երբէք միշտ ունենալ կարող չէ, ինչ որ անդադար փոխվումէ, և մահուան մի անկողնից դէպ ի միւսն գնում, մի ժառանգից միւսի ձեռք անցնում: Մարդ կայ, ուր դէպ է աղքատանայ, յառաջ քան թէ մտածել կարող է իւր աւելի բարձր բաղդաւորութեանը վերայ, որ է մարդ լինել իրօք, Աստուծոյ և աւելի բարձր կոչման ու նշանակութեան պատկանելով:

Շատ անգամ ևս միայն մի ըռպէական փոքրոգութիւն է, որ թուլացնում է մեր մէջ Աստուծոյ ամենայն բանի վերայ իշխող Նախախնամութեանը վերայ ունեցած մեր հաւատն ու վստահութիւնն: Աչքի ու մտքի յառաջ ունենալով մեր փոքրութիւնը, բայց միտներս չբերելով Աստուծոյ անթիւ ու անճառելի կատարելութիւններն, մի մի մարդ լքանումէ սրտով և ասումէ ինքն իրան մէջ. Աստուած անչափ բարձր ու մեծ է մեզ նման արարածներից. ինչպէս կարող է իմ շնչին հանգամանքներիս, զրութեանս, այս այն պէտքերիս, կամ ցանկութիւններիս վերայ, կամ թէ ամէն մի աննշան արարածի լաւի ու վատի, բարօրութեանն ու չարիքի վերայ հոգ, հոգացողութիւն անել: Ո՞ւր է տանում քեզ այսպիսի կարճատեսութիւնդ, Գու աստուածութեան արժանաւորութիւնները սաստիկ պակասացնումես, շափազանց ստորացնում, մի մահկանացուի սահմանաւոր խելքի ու սահմանափակ զօրութեան հետ համեմատելով, կամ նմանացնելով: Գու Աստուծուն քեզ հետ ես համեմատում, այ որդն, և Արարչին արարածի հետ նոյն արժէքը տալիս:

Աչքդ բաց ու տես. Նա, որ երկնքի աստղերը գոյութիւն ու կեանք ունեցող բոլոր աշխարհիս անսահման տարածութեամբ ման է ածում և նոցա ընթացքը կարգի դնում, — Նա որ ամենափոքրիկ աւաղի հատն անգամ մեր երկրագունդի հետ պինդ կապում է աներևոյթ կապերով, որ բան նորանից

չկորչի, չպակասի. որ հոգս է քաշում աշխարհիս ամենաշնչին որդի համար ևս, որ իւր կենքին վերայ ուրախ ապրումէ վարդի մի թերթի վերայ մեղքի ցօղի նման — նա, այն Ստեղծող Աստուածը պէտք է տիեզերքի մեծ թագաւորութիւնը այնպիսի անվերջ, յաւիտենական իմաստութեամբ կառավարէր ու պիտի կարողանար մոռանալ իւր զաւակները, որոնք ամէն բանից աւելի Իւրան են գովում, Իւր անունը տալիս, Իւրան երկրպագութիւն անում: — Մտնա՛ւ: Ի՛նչ անարժան բառ է, որ մարդ կարող է մտքից անցկացնել, կամ բերանից հանել ամենակատար Էակի մասին: Ամա՛ Աստուած չէ՛ նա, կամ՝ որ Աստուած է, ուրեմն և ամենակատարեալ է. և եթէ նա ամենակատարեալ է, ուրեմն և անվերջ, անսահման ու յաւիտենական է՝ նորա ամենագիտութիւնը, ամենողորմածութիւնը և ամենայն ինչ ընդգրկող սէրն:

Ո՛վ անքննելի Էութիւն, որին հայր անուն եմ տալիս. Դու որ ամենայն բան պահպանումես, ամենայն բան կարգաւորումես, ամենայն բան տնօրինում, կառավարում, առաջնորդում, Դու ես տնօրինողն և իմ վիճակս, ինձ ամենայն լինելու բաներն: — Ոչ մի ժամանակ ինձ թողած չես, ոչ մի ժամանակ ևս ինձ թողնելու չես, երեսից ձգելով, թէև ամենայն բան ևս ինձ թողնելու լինի: Սորա համար հանգիստ ու անվրդով սրտով կամենում եմ այն ճանապարհներով գնալ, որ ինձ պիտի տանի Քո աներեղթ ձեռք. վասն զի այդ ճանապարհները պիտի բերեն, հասցնեն ինձ դէպ ի Քեզ: Երկրպագութեամբ եմ ընդունում Քո նախախնամութեանդ զարմանալի շաւիղները և այն յաւիտենական օրէնքները, որով պիտի շարժի հոգիների աշխարհը, — երկրպագութիւն անելով պաշտում եմ մինչև անգամ այն բանն, ինչ որ ինձ համար անհասկանալի է, և ինչ որ իմ խելքիս տկար լոյսը չէ կարող թափանցել, Ասան զի ամենայն բան, ինչ որ Քեզանից է գալիս, դէպ ի Քեզ է բերում:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԶԷ.

ԱՆՅՔ. (« ԱՐԱՐԱՏ » , յունիս) .

Օրիորդը հանում է մեծ պահարանը գրքոյկի մէջից. խնդիրը համառօտ և ամփոփ առաջարկում է, ամօթխածութեամբ ոգևորվելով այս և այն բառերին վերայ, միանգամայն կենդանի և փայլուն աչքերն աւելի ուղիղ յառելով դժգոյն կառափին: Խոյս տալու կամքը բոլորովին ճնշվում է, երբ մտաբերում է նա վայրկեանին կարեւորութիւնը, որ նորա բաղդը պիտի վճռէ: Նա ցանկանում է նպաստ ընդունել մատենագիրների ընկերութենից, Ահա գրած ունի և վէպ: